# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2026թվականի N 044-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20-Ը ՄԱՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 20-ը մարտի 2026 թվականի թիվ 6 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 20.03.2026թվականի թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենիի համայնքապետարանին պատկանող տեխնիկաների վերանորոգման նպատակով գումար հատկացնելու մասին:

3. Արենի համայնքի ավագանու անդամ Անուշավան Պատվականի Ավետիսյանին փոխհատուցում տրամադրեու մասին:

4. Արենի համայնքի Չիվա բնակավայրի փողոցները անվանակոչելու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 16.01.2026թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2026թվականի N 045-Ա

### ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով այն հանգա, որ Արենի համայնքի սեփականություն հանդիսացող բազմաֆունկցիոնալ էքսկավատորը և բեռնատար ավտոաշտարակը ունեն հրատապ վերանորոգման կարիք՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենիի համայնքապետարանին պատկանող CASE մակնիշի բազմաֆունկցիոնալ էքսկավատորի վերանորոգման նպատակով , հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով, Արենի համայնքի 2026թվականի տարեկան բյուջեից հատկացնել 1 585 000 ՀՀ դրամ գումար:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին Արենիի համայնքապետարանին պատկանող GAZ-AP-17A մակնիշի բեռնատար ավտոաշտարակի վերանորոգման նպատակով կատարել հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով, առավել մատչելի գին և որակյալ ծառայություններ մատուցող ընկերության հետ կնքել պայմանագիր և հատկացնել անհրաժեշտ գումար՝ պայմանով, որ աշխատանքների ավարտից հետո հաշվետվություն ներկայացվի Արենի համայնքի ավագանուն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2026թվականի N 046-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 24-րդ հոդվածի 1-ին մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է

Արենի համայնքի ավագանու անդամ Անուշավան Պատվականի Ավետիսյանին հատկացնել 10400 ՀՀ դրամ դրամական փոխատուցում, որպես ավագանու անդամ իր պարտականությունների կատարման ընթացքում առաջացած ծախսերի դիմաց:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՄԱՐՏԻ 2026թվականի N 047-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում ավելացնել նոր 18-րդ փողոց:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում ավելացնել 18-րդ փողոց 1-ին փակուղի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2026թվականի N 048-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը հունվարի 2026 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2026 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4264/տրանսպորտային նյութեր/ հոդվածից պակասեցնել 5 000 000 ՀՀ դրամ և ուղղել՝

1) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 1 բաժնի 06 խմբի 01 դասի 4252 /մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածին 4 500 000 ՀՀ դրամ,

2) արտադպրոցական դաստիարակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին 500 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի սոց. անապահով անձանց աջակցություն  10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից պակասեցնել 6 700 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի՝

1) 4267 /կենցաղային և հանրային սննդի նյութեր/ հոդվածին 2 000 000 ՀՀ դրամ,

2) 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ հոդվածին 4 000 000  ՀՀ դրամ,

3) 4726 /հուղարկավորության նպաստներ բյուջեից/ հոդվածին  700 000 ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ ՝ սուբվենցիաներ եկամտատեսակում ավելացնել  37 468 600 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:

Կողմ -8    Դեմ -0    Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝    ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ